ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **02 հունիս 2020թ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) նախագահի 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 2 որոշման հիման վրա՝ հեռակա քվեարկությամբ, 2020 թվականի մայիսի 27-ին տեղի ունեցավ նիստ: Էլեկտրոնային քվերակությունը սկսվել է 2020 թվականի մայիսի 27-ին և ավարտվել 2020 թվականի հունիսի 1-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ

1. Տեսչական մարմնի Կառավարման խորհրդում ընդգրկված հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Մ. Սանդոյանի, Ա.Դանիելյանի, Ա. Կարապետյանի, Ս. Թովմասյանի անդամությունը ևս երկու տարի ժամկետով երկարաձգելու հարցի քննարկում և որոշման կայացում:

2. Ի գիտություն ընդունել Կառավարման խորհրդի անդամ՝ Սարգիս Թովմասյանի գրությունը՝ ուղղված Կառավարման խորհրդին:

Քվերակությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Ֆելիքս Ցոլակյան ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա.Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող
Ռ. Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ ներկայացուցիչ
Ս" Թովմասյան	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան
Ա. Կարապետյան	«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն:

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Կ. Բրուտյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Դանիելյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ֆելիքս Ցոլակյանը քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4. Ռ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
5. Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
6. Ա.Ղուլարյան քվեարկեց կողմ,
7. Ս. Թովմասյանը քվեարկեց կողմ,
8. Սարգիս Թովմասյանը քվեարկեց կողմ,
9. Մ"Սանդոյանը քվեարկեց կողմ,
10. Ա. Կարապետյանը քվեարկեց կողմ:

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 10 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Երկարաձգել Տեսչական մարմնի Կառավարման խորհրդում ընդգրկված հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Մ. Սանդոյանի Ա.Դանիելյանի, Ա.Կարապետյանի և Ս. Թովմասյանի կառավարման խորհրդում ներգրավվելու ժամկետը ևս երկու տարի ժամկետով:
2. Ի գիտություն ընդունել Կառավարման խորհրդի անդամ՝ Սարգիս Թովմասյանի գրությունը՝ ուղղված Կառավարման խորհրդին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Ֆ. Ցոլակյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ն.Մկրտչյան**

ստորագրություն